Հայաստանի Հանրապետություն

ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ

Էներգաարդյունավետության բարձրացման միջոցառումները և կայունության ապահովման հիմնախնդիրները բազմաբնակարան շենքերում

Բնակիչների շրջանում իրականացված հարցումների և համատիրությունների ուսումնասիրության արդյունքների ներկայացում

Բազմաբնակարան շենքերի էներգաարդյունավետության վերաբերյալ սպառողների կարծիքի ուսումնասիրությունն իրականացվել է «Շենքերի էներգաարդյունավետ արդիականացմանն ուղղված ներդրումների ռիսկերի նվազեցում» ՄԱԶԾ-ԿԿՀ ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) պատվերով՝ «Բրեվիս» կազմակերպության կողմից: Ուսումնասիրության անհրաժեշտությունը պայմանավորված էր <u>երեք կարևոր հանգամանքով</u>.

Նախ, 2019թ.-ի վերջից ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ Ծրագրի բանակցությունների արդյունքում բազմաբնակարան շենքերում էներգաարդյունավետության միջոցառումների կիրառումը ներառվեց պետական սուբվենցիոն ծրագրով նախատեսված միջոցառումների ցանկում: Հաշվի առնելով, որ այդ ծրագրերը ֆինանսական և տեխնիկական աջակցություն են ստանում նաև Ծրագրից, կարևոր էր ուսումնասիրել բնակիչների բավարարվածությունն իրենց շենքերում իրականացված էներգաարդյունավետության միջոցառում-ներից, փաստել դրանց արդյունքում շահառուների կողմից գնահատված օգուտները և, զուգահեռաբար, պարզել այլ շենքերի բնակիչների ցանկությունն ու ֆինանսական հնարավորությունը մասնակցելու վերոնշյալ սուբվենցիոն ծրագրերին:

Բացի այդ, էներգաարդյունավետության միջոցառումների կայունության ապահովման տեսանկյունից կարևոր էր վերհանել բնակիչների կարծիքն իրենց շենքերը կառավարող կառույցների և վերջիններիս կողմից շենքերի շահագործման ու պահպանման պարտադիր նորմերի կատարման վերաբերյալ, ինչպես նաև նրանց պատրաստակամությունը ֆինանսավորել այն լրացուցիչ ծախսերը, որոնք առաջանալու են ջերմամեկուսացված շենքերի շահագործումն ու պահպանումը պատշաճ մակարդակով ապահովելու համար:

Վերջապես, նկատի ունենալով բազմաբնակարան շենքերի կառավարման և պահպանման բնագավառում կառավարության նախաձեռնած բարեփոխումները, Ծրագրի շրջանակում իրականացվեց նաև համատիրությունների, որպես շենքերի կառավարման հիմնական կառույցի, առանձնահատուկ խնդիրների, կարիքների և կարծիքների ուսումնասիրություն՝ էներգաարդյունավետության միջոցառումների իրականացման և դրանց կայունության ապահովման հարցերի հետ կապված:

Սույն աշխատաժողովը նվիրված է վերը նշված երեք ուղղություններով կատարված ուսումնասիրությունների հիմնական արդյունքների ներկայացմանը և շահագրգիռ կողմերի մասնակցությամբ՝ ստորև ներկայացված օրակարգի հարցերի քննարկմանը:

ՕՐԱԿԱՐԳ

28 մարտի 2023թ.
ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի նիստերի դահլիճ (Պետրոս Ադամյան 14)

10:00 - 10:30	Մասնակիցների գրանցում և սուրճի հյուրասիրություն
10:30 - 10:35	Բացման խոսք *Դիանա Հարությունյան, ՄԱԶԾ կլիմայի փոփոխության ծրագրերի համակարգող*
10:35 – 10:55	**«ՀՀ քաղաքների բազմաբնակարան շենքերի էներգաարդյունավետության վերաբերյալ բնակիչների կարծիքի ուսումնասիրություն».** **ՄԱՍ 1. Էներգաարդյունավետության բարձրացման ուղղված միջոցառումների վերաբերյալ բնակիչների կարծիքները** *Հասմիկ Առաքելյան, «Բրեվիս», հետազոտությունների գծով տնօրեն*
10:55 - 11:15	Հարց ու պատասխան
11:15 - 11:35	**ՄԱՍ 2. Բազմաբնակարան շենքերի կառավարման վերաբերյալ բնակիչների կարծիքը** *Հասմիկ Առաքելյան, «Բրեվիս», հետազոտությունների գծով տնօրեն*
11:35 - 11:55	**«Համատիրությունների հիմնախնդիրները բազմաբնակարան շենքերի կառավարման և պահպանման հարցում»** *Աստղիկ Միրզախանյան, ՄԱԶԾ կլիմայի փոփոխության ծրագրերի սոցիալական խոցելիության և գենդերային հարցերի մասնագետ*
11:55 - 12:15	Հարց ու պատասխան, քննարկում
12:15 - 12:35	**«Բազմաբնակարան շենքերի կառավարման բնագավառի հրատապ խնդիրները և դրանց լուծմանն ուղղված կառավարության նախաձեռնությունները»** *Տանյա Արզումանյան, ՀՀ քաղաքաշինության կոմիտե, բնակֆոնդի կառավարման և կոմունալ ենթակառուցվածքների վարչության պետ*
12:35 - 12:55	Հարց ու պատասխան
12:55 - 13:00	Ամփոփում, հետագա աշխատանքների ուրվագծում *Դիանա Հարությունյան, ՄԱԶԾ կլիմայի փոփոխության ծրագրերի համակարգող*